ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

(1917 թ. մարտ—հոկտեմբեր)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպություններին հնարավորություն ընձեռեց դուրս գալու ընդհատակից և ծավալելու հեղափոխական ակտիվ գործունեություն։

Անդրկովկասում բոլշևիկյան մամուլի[1] *մյուս օրգանների հետ մեկտեղ սկսեցին լույս տեսնել Բաքվում մայիսի 1-ից «Սոցիալ-դեմոկրատը», Ալեքսանդրապոլում հունիսի 22-ից «Նոր կյանքը», Թիֆլիսում հունիսի 29-ից «Բանվորի կռիվը», Շուշիում օգոստոսի 18-ից «Նեցուկը»։ Այդ թերթերի շուրջը համախմբված էին ականավոր հեղափոխականներ Ստ. Շահումյանը, Ա. Մռավյանը, Ա. Միկոյանը, Ս. Խանոյանը, Ա. Կարինյանը, Պ. Արվելաձեն, Գ. Հայկունին, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Կամարին, Գ. Աթաբեկյանը, Բ. Ղարիբջանյանը, Ա. Շահդելդյանը և շատ ուրիշներ, որոնք 1917 թ. մարտ-հոկտեմբեր ժամանակաշրջանում, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի և բոլշևիկյան կուսակցության մշակած տակտիկայով ու ստրատեգիայով, համարձակորեն հանդես եկան իմպերիալիստական պատերազմի կողմնակիցների քննադատությամբ՝ ցույց տալով պատերազմի ավարտի դեմոկրատական ուղին։ Մինչև նշված թերթերի լույս տեսնելը տվյալ հարցում Անդրկովկասում աչքի ընկնող դերը պատկանում էր սոցիալ-դեմոկրատական միացյալ «Պայքար»*[2] *թերթին։*

1917 թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո հայ բոլշևիկները «Պայքարի», ապա և «Սոցիալ-դեմոկրատի» էջերից ավելի մեծ եռանդով շարունակեցին մերկացնել շարունակվող իմպերիալիստական պատերազմը՝ պայքարելով շովինիզմ սերմանող բուրժուազգայնական և մանրբուրժուական կուսակցությունների դեմ։ 1917 թ. գարնանը Անդրկովկասում այդ պայքարն ընթանում էր դժվարին և ծանր պայմաններում, քանի որ թե՛ Անդրկովկասում ժամանակավոր կառավարության օրգան ՕԶԱԿՕՄ-ը, թե՛ նրան աջակցող էսեռամենշևիկյան և բուրժուազգայնական կուսակցությունները, որոնք մեծամասնություն ունեին տեղական սովետներում, օրվա լոզունգ դարձնելով «պատերազմ մինչև հաղթական ավարտը», ջանում էին աշխատավորությանն արբեցնել սոցիալ-շովինիզմի թույնով և շարունակել պատերազմը։ Այդ կուսակցությունները կենտրոնի իրենց գաղափարակիցների նման աշխատավորներին խաբելու համար առաջ քաշեցին «հեղափոխության պաշտպանության» լոզունգը, որով ձգտում էին արդարացնել մղվող իմպերիալիստական պատերազմը։ Այսպես, դաշնակցության օրգան «Հորիզոնը» գրում էր. «Վերջնական հաղթանակը անարգ թշնամու վրա, այդ միայն կարող է ապահովել կատարված մեծ հեղաշրջման արդյունքները Ռուսաստա-

---

[1] *1917 թ. մարտ-հոկտեմբերին վերածնվեցին բոլշևիկյան մամուլի օրգանները մեր երկրի 29 քաղաքներում, իսկ 27-ում առաջին անգամ սկսեցին լույս տեսնել 130-ից ավելի բոլշևիկյան թերթեր և ամսագրեր* (С. А. Андронов, Большевистская печать в трех революциях, М., 1978, с. 240).

[2] *«Պայքար» թերթի հրատարակությանը բոլշևիկները մասնակցել են 1915 թ. դեկտեմբերից մինչև 1917 թ. հունիսի 10-ը (100-րդ համարը), ապա՝ հեռանալով մենշևիկներից ստեղծել են մամուլի իրենց օրգանները։*

նում»[3]։ Նրան էր կրկնում լիբերալ բուրժուական «Մշակը», որի կարծիքով «ժամանակավոր կառավարությունը պետք է պատերազմը հասցնե կամ հաղթական վախճանի... կամ կնքվի դաշնակից պետությունների համաձայնությամբ պատվավոր հաշտություն»[4]։ Այդ կուսակցությունները հայ ժողովրդին կոչ էին անում կանգ չառնել զոհաբերությունների առաջ, ամեն կերպ աջակցել ժամանակավոր կառավարությանը՝ պատերազմը հաղթական ավարտի հասցնելու համար, որը իբր «կլուծի» հայկական հարցը, հայ ժողովրդին կտա ինքնորոշման իրավունք[5]։

Այս պայմաններում հայ բոլշևիկների և նրանց մամուլի առջև դժվարին խնդիր էր դրված՝ աշխատավորությանը շովինիստական թմբիրից ազատելու համար բացատրել և պարզաբանել, որ պատերազմը ժամանակավոր կառավարության օրոք էլ չի փոխել իր իմպերիալիստական, կողոպտչական բնույթը և որ «հեղափոխության պաշտպանության» լոզունգը լոկ մի քող է իմպերիալիստական պատերազմը շարունակելու համար, և որ այն հայ ժողովրդին բացի նոր զոհերից ոչինչ չի բերի։

Հայ բոլշևիկները մամուլի էջերից հանդես եկան իմպերիալիստական պատերազմի շարունակման դեմ։ Օրինակ, «Սոցիալ-դեմոկրատը» հայ աշխատավորությանը ապրիլի 10-ին Բաքվում կայացած ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության միջշրջանային կոնֆերանսի պատերազմի և խաղաղության վերաբերյալ բանաձևերին ծանոթացնելու նպատակով դրանք զետեղեց իր էջերում։ Սա. Շահումյանի կազմած այդ բանաձևերում ասված էր. «Ռուսաստանում և ընդհանրապես ամբողջ Եվրոպայում խաղաղության և ազատության հաստատման համար մենք պետք է առաջ քաշենք ոչ թե «կռիվը մինչև վերջ» լոզունգը, որը իմպերիալիստական բուրժուազիայի լոզունգն է, և ոչ էլ «հայրենիքի պաշտպանության» լոզունգը հենց թեկուզ ցարական ռեժիմից ազատված հայրենիքի, այլ միմիայն բոլոր երկրների պրոլետարիատի եղբայրության լոզունգը, միջազգային դասակարգային կռվի և ժողովուրդներին իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ ապստամբելու լոզունգը»[6]։ Իսկ «Պայքարում» մարտ-ապրիլին հակապատերազմական բնույթի բազմաթիվ հոդվածներով հանդես եկան Ս. Խանոյանը, Ա. Մռավյանը, Ա. Շահգելդյանը՝ մերկացնելով իմպերիալիստական բուրժուազիային և նրա սպասարկուներին։

Հայ բոլշևիկների և նրանց մամուլի ծավալած աշխատանքը տալիս էր իր արդյունքները։ Սակայն հարկավոր է նշել, որ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում դեռևս ուժեղ էին ուռա-հայրենասիրական տրամադրությունները, իսկ որոշ բոլշևիկների մոտ դեռ հստակորեն չէր ձևավորվել պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ տակտիկական գիծը։ Այս իրադրության պայմաններում ինչպես հեղափոխության, այնպես էլ պատերազմի և խաղաղության հարցերի պարզորոշ պատասխանը տրվեց Վ. Ի. Լենինի «Ապրիլյան թեզիսներում», որոնցով հեղափոխության առաջնորդը հանդես եկավ վտարանդիությունից Ռուսաստան վերադառնալուց անմիջապես հետո՝ 1917 թ. ապրիլի 4-ին։ «Ապրիլյան թեզիսները» պաշտպանության արժանացան ապրիլի 24-ից 29-ը Պետրոգրադում կայացած ՌՍԴԲԿ VII (Ապրիլյան) համառուսաստանյան կոնֆերանսում, որի ընդունած բանաձևում շեշտվում էր շարունակվող պատերազմի իմպերիալիստական բնույթը, նշվում էր, որ «պրոլետարական կուսակցությունը չի կարող պաշտպանել ո՛չ այժմյան պատերազմը, ո՛չ այժմյան կառավարությունը, ո՛չ նրա փոխառու-

---

3 «Հորիզոն», 11. III. 1917։

4 «Մշակ», 23. IV. 1917։

5 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 204։

6 «Սոցիալ-դեմոկրատ», 7. V. 1917։

թյունները, բոլորովին չխզելով իր կապերն ինտերնացիոնալիզմից»[7]։ Կոնֆերանսն անթույլատրելի գտավ նաև «հեղափոխական պաշտպանողականության» արվող որևէ զիջում և սկզբունքորեն անհնար համարեց կուսակցության մասնակցությունն իմպերիալիստական երկրների կողմից Ստոկհոլմում հրավիրվող այսպես կոչված «սոցիալիստական» կոնֆերանսին։ Երկիշխանության պայմաններում Վ. Ի. Լենինը, առաջ քաշելով «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը, գտնում էր, որ չի կարելի դուրս գալ իմպերիալիստական պատերազմից, չի կարելի դեմոկրատական, ոչ բոնի հաշտություն հաստատել՝ առանց կապիտալի իշխանությունը տապալելու, առանց պետական իշխանությունը մի այլ դասակարգի՝ պրոլետարիատի, ձեռքն անցնելու[8]։

Հայ բոլշևիկները և բոլշևիկյան թերթերը, հիմք ունենալով Վ. Ի. Լենինի «Ապրիլյան թեզիսները» և Ապրիլյան կոնֆերանսի որոշումները, երկրամասի աշխատավոր զանգվածներին բացատրում էին «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգի էությունը, դեմոկրատական հաշտության հասնելու ռեալ ուղիները։ Հայ բոլշևիկյան պարբերականները «Պրավդայից» արտատպեցին Ապրիլյան կոնֆերանսի բանաձևերը[9], միաժամանակ նրանց էջերում հանդես եկան բազմաթիվ ականավոր բոլշևիկներ, որոնք բանվորներին և գյուղացիներին պարզաբանում էին կուսակցության տակտիկական գիծը ինչպես հեղափոխության, այնպես էլ պատերազմի և խաղաղության արմատական հարցերում։ Օրինակ՝ «Պայքարում» հանդես եկան Ապրիլյան կոնֆերանսի մասնակիցներ Ֆ. Մախարաձեն և Մ. Ցխակայան, որոնք աշխատավորությանը բացատրում էին Ստոկհոլմում հրավիրվող միջազգային սոցիալիստական կոնֆերանսի օպորտունիստական, համաձայնողական բնույթը և բոլշևիկյան կուսակցության որոշման ճշմարտացիությունը՝ չմասնակցել այդ չարչիական գործարքին[10]։

1917 թ. ապրիլին բացահայտորեն դրսևորվեց ժամանակավոր կառավարության իմպերիալիստական ձգտումը՝ արտաքին քաղաքականության բնագավառում հասնել իր նվաճողական պլանների իրագործմանը։ Դա արտահայտվեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Միլյուկովի նոտայի մեջ՝ ուղղված դաշնակից պետություններին, որտեղ նա հավատացնում էր, որ Ռուսաստանը կկատարի իր «պարտքը» դաշնակիցների հանդեպ և պատերազմը կշարունակի մինչև հաղթական վախճան։ Միլյուկովի նոտան լցրեց ժողովրդական մասսաների համբերության բաժակը։

1917 թ. ապրիլի 21-ին Պետրոգրադում բոլշևիկների ղեկավարությամբ տեղի ունեցավ 100 հազարանոց ցույց՝ ուղղված ժամանակավոր կառավարության քաղաքականության դեմ։ Իշխանության ճգնաժամը ակնհայտ դարձավ։ Սակայն ժամանակավոր կառավարությանն օգնության հասան էսէռների և մենշևիկների համաձայնողական կուսակցությունները, որոնք մտան կառավարության մեջ, կազմելով նոր՝ կոալիցիոն, կառավարություն։

Հայ իրականության մեջ տարբեր դասակարգեր և կուսակցություններ իրենց մոտեցումը ցուցաբերեցին պետրոգրադյան իրադարձություններին և կոալիցիոն մինիստրությանը։ Բուրժուազիան, բուրժուաազգայնական և էսէռամենշևիկյան կուսակցություններն ու նրանց մամուլը, դատապարտելով բոլշևիկներին՝ ապրիլյան ցույցը կազմակերպելու համար, միաժամանակ գոհունակությամբ ընդունեցին կոալիցիոն կառավարություն կազմելու լուրը։ Այսպես, հայ սպեցիֆիկների օրգան Բաքվի «Բանվորը» ապրիլի 21-ի ցույցը

---

7 «ՍՄԿՊ-ն համագումարների կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս I, Երևան, 1954, էջ 421։

8 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 196։

9 «Պայքարում» արտատպվել են Ապրիլյան կոնֆերանսի բանաձևերը պատերազմի մասին՝ 1917 թ. մայիսի 30-ին։

10 «Պայքար», 17. V. 1917 և այլն։

համարում էր «անպատասխանատու» խմբերի գործողությունների արդյունք[11], իսկ «Հորիզոնը» գրում էր. «Ամենամխիթարականն այն էր, որ խորհուրդը (Պետրոգրադի սովետը—Հ. Ա.) որոշել է դատապարտել փողոցային ցույցերը, որ արվել են թե՛ կառավարության և թե՛ խորհրդի դեմ»[12]։ Նույնպիսի մտքեր էր քարոզում նաև լիբերալ բուրժուական «Մշակը»[13]։

1917 թ. մայիսին հայ բոլշևիկները մամուլի էջերից պայքար էին մղում հակահեղափոխական մամուլի հերյուրանքների դեմ՝ ցույց տալով ժամանակավոր կառավարության ճգնաժամի բուն պատճառները։ Այսպես, թե՛ «Պայքարը», և թե՛ «Սոցիալ-դեմոկրատը» աշխատավորությանը բացատրում էին, որ Միլյուկովի նոտան ոչ այլ ինչ էր, եթե ոչ ժամանակավոր կառավարության ագրեսիվ պլանների գրսևորում, իսկ ապրիլի 21-ին Պետրոգրադի ցույցն աշխատավորության դժգոհության արտահայտությունն էր այդ կառավարության միլիտարիստական քաղաքականության դեմ։ «Սոցիալ-դեմոկրատը» ջախջախիչ հարված հասցնելով «Բանվորի» ստերին ու կեղծիքներին, տպագրեց Ստ. Շահումյանի «Քաղաքական ճգնաժամը» հոդվածը, որտեղ հեղինակը նշում էր, որ ժամանակավոր կառավարության ճգնաժամի համար պետք է նշում էր, որ ժամանակավոր կառավարության ճգնաժամի համար պետք է ափսոսան նրանք, «ում որ շահավետ է «պատերազմը մինչև վերջ» (անգլ., ֆրանս., ռուս. իմպերիալիստները)»[14]։ Իսկ «Պայքարը» Միլյուկովի նոտան համարեց հակադեմոկրատական մի քայլ, որը կատարվեց այն օրը, երբ ամբողջ պրոլետարիատը տոնում էր իր տոնը՝ Մայիսի 1-ը[15]։

Հայ բոլշևիկյան պարբերականներն անդրադարձան նաև կոալիցիոն կառավարություն կազմելուն, ինչպես նաև պատերազմի և խաղաղության հարցերում նրա վարած քաղաքականությանը։ Այսպես, ղեկավարվելով Ապրիլյան կոնֆերանսի որոշումներով՝ «Պայքարը», «Սպառվա՞ծ է արդյոք ճգնաժամը», «Վերակազմված կառավարությունը և մենք», «Առանց կանգնելու» հոդվածներում հայ աշխատավորությանը բացատրում էր, որ մենշևիկների և էսէռների կողմից մինիստրական պաշտոններ զբաղեցնելը բնավ չի փոխի ժամանակավոր կառավարության հակաժողովրդական էությունը։ Կոալիցիոն կառավարության սպառիչ բնութագիրը տրվեց մայիսի 15-ին Բաքվում կայացած ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության միջշրջանային կոնֆերանսի բանաձևում, որն իրենց էջերում զետեղեցին թե՛ «Սոցիալ-դեմոկրատը», թե՛ «Պայքարը»։ Ստ. Շահումյանի առաջարկած այդ բանաձևում ասված էր. «Բուրժուազիան չցանկանալով ձեռքից բաց թողնել պետական իշխանությունը, փորձ արեց կառավարության մեջ քաշել սոցիալիստական դեմոկրատիայի ներկայացուցիչներին...։ Սոցիալիստները քաղաքական խոշոր սխալ գործեցին մինիստրության մեջ մտնելով... իրենք կանգնեցին իմպերիալիստական դիրքի վրա»[16]։

1917 թ. մայիս-հունիսյան օրերին հայ բոլշևիկյան թերթերը հանդես էին գալիս իմպերիալիստական պատերազմը շարունակելու համար ձեռնարկվող բոլոր միջոցառումների դեմ։ Այդպիսի միջոցառումներից էր «ազատության փոխառությունը», որի բաժանորդագրման համար ժամանակավոր կառավարությունը կոչով հանդես եկավ 1917 թ. մարտի 27-ին։ Այդ կոչում ժողովրդին քարոզվում էր. «լարել բոլոր ուժերը և օգնել հայրենիքին»[17]։ Սակայն, թողարկելով «ազատության փոխառությունը», ժամանակավոր կառավարությունը նպատակ էր հետապնդում բնակչությունից կորզել նորանոր միջոցներ՝ նվա-

11 «Բանվոր», 29. IV. 1917։

12 «Հորիզոն», 23. IV. 1917։

13 «Մշակ», 23. IV. 1917։

14 «Սոցիալ-դեմոկրատ», 28. V. 1917։

15 «Պայքար», 7. V. 1917։

16 «Սոցիալ-դեմոկրատ», 28. V. 1917, «Պայքար», 4. VI. 1917։

17 Негативный фонд Бакинского филиала Центрального музея В. И. Ленина, № 9106.

ճողական պատերազմը շարունակելու համար։ Անդրկովկասի բուրժուազիան, համաձայնողական և բուրժուաազգայնական կուսակցությունները կենտրոնի իրենց դաղափարակիցների նման միաբերան պաշտպանեցին «ազատության փոխառությունը» և ձեռնամուխ եղան տարածելու այն։ Այսպես, օրինակ, 1917 թ. ապրիլի 13-ին Թիֆլիսում ՕԶԱԿՕՄ-ի հրավիրած խորհրդակցությունում, որը քննարկելու էր «ազատության փոխառության» տարածման եղանակները, հանդես եկան ՕԶԱԿՕՄ-ի նախագահ, կադետ Վ. Խուլամովը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանը, մեծահարուստ վաճառականներ Աֆրիկյանն ու Բերբերովը, որոնք նշում էին, որ «առանց փողի չի կարելի շարունակել և հաղթականորեն վերջացնել պատերազմը»[18], ուստի հարկավոր է բաժանորդագրվել այդ փոխառությանը։ «Ազատության փոխառությունը» մասսայականացնելու ուղղությամբ էին աշխատում նաև Անդրկովկասում ստեղծված «ազատության փոխառության» հասարակական կոմիտեները, որոնց խնդիրն էր ամեն կերպ նպաստել «բաժանորդագրման հաջողությանը»[19]։ Հայ իրականության մեջ «ազատության փոխառությանը» ջերմ պաշտպաններ և կողմնակիցներ էին մանրբուրժուական և բուրժուաազգայնական կուսակցությունները, որոնք սիրով իրենց մամուլի էջերը տրամադրեցին այդ փոխառության պրոպագանդմանը։ Դաշնակցական «Հորիզոնը», օրինակ, «ազատության փոխառությանը» բաժանորդագրումը համարեց «հեղափոխության ձեռք բերած ազատություններն ամրապնդելու միջոց»[20], իսկ «Մշակը»՝ «վստահության քվե նոր իրավակարգին»[21]։

Հայ բոլշևիկների և նրանց մամուլի առջև խնդիր էր դրված հայ աշխատավորությանը բացատրել, որ «ազատության փոխառությունը» ժամանակավոր կառավարության կողմից մի նոր քայլ է ժողովրդից նորանոր միջոցներ քամելու՝ պատերազմական ծախսերը հոգալու համար։ Դա առավել քան կարևոր էր, քանի որ փոխառության հաջողության դեպքում կառավարությունը գործը կներկայացներ այնպես, որ իբր թե ժողովրդական մասսաները կողմնակից են շարունակվող իմպերիալիստական պատերազմին։ «Ազատության փոխառության» դեմ հանդես եկան «Պայքարի» և «Սոցիալ-դեմոկրատի» շուրջը համախմբված բոլշևիկները։ «Սոցիալ-դեմոկրատը» հրապարակեց մայիսի 15-ի ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության վերոհիշյալ կոնֆերանսի բանաձևը, ըստ որի բանվորները պետք է հրաժարվեին համաձայնություն տալ այդ փոխառությանը[22], ինչպես նաև Ա. Շահդելդյանի հոդվածը, որի համաձայն «գրվել «ազատության փոխառությանը», կնշանակի համաձայնել այս ավազակային պատերազմը շարունակելուն»[23]։

«Ազատության փոխառությունը» սուր կերպով քննադատեցին նաև «Բանվորի կռիվը» և «Նեցուկը», որոնք այն միտքն էին պրոպագանդում, թե «ազատության փոխառության» պաշտպանությունը ջուր կլցնի իմպերիալիստական բուրժուազիայի ջրաղացին[24]։ Բանվորների և զինվորների շրջանում բոլշևիկների ծավալած եռանդուն բացատրական աշխատանքը նպաստեց «ազատության փոխառության» իսկական էության բացահայտմանը։

1917 թ. հունիսին երկրի քաղաքական կյանքի կենտրոնում նորից ամբողջ սրությամբ դրված էր պատերազմի հարցը։ Չնայած բոլշևիկների և նրանց մամուլի անդուլ հակապատերազմական պրոպագանդային՝ Անդրկովկասի, մասնավորապես նաև հայ աշխատավորության անգիտակից մասի մոտ

---

18 «Кавказ», 15. IV. 1917.

19 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆ. 119, ց. 1, գ. 25, թ. 23։

20 «Հորիզոն», 5. V. 1917։

21 «Մշակ», 9. V. 1917։

22 «Սոցիալ-դեմոկրատ», 28. V. 1917։

23 Նույն տեղում, 9. VII. 1917։

24 «Բանվորի կռիվը», 19. VII. 1917։

դեռևս տիրում էին «պաշտպանողական» տրամադրություններ։ Դրան որոշ չափով նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Անդրկովկասի բոլշևիկները մենշևիկների հետ մեկտեղ գտնվում էին միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ։ Հունիսի կեսերին մենշևիկների վարքագիծն արդեն անհրաժեշտորեն հարց բարձրացրեց բոլշևիկների առջև՝ խզել կապերը մենշևիկյան պաշտպանողական շրջաններից և ստեղծել ինքնուրույն կազմակերպություն[25]։ Անջատումն անհրաժեշտորեն դրսևորվեց նաև մամուլի ասպարեզում։

«Պայքար» թերթի շուրջը համախմբված բոլշևիկներ Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Ա. Ամիրյանը և ուրիշներ առաջիններից էին, որ խզեցին կապերը թերթի մենշևիկյան մեծամասնության հետ և դուրս եկան խմբագրության կազմից՝ հիմնելով իրենց օրգանը՝ «Բանվորի կոիվը» թերթը։ Նրանք հետագայում բաց նամակով հանդես եկան թերթի ընթերցողների առջև և պարզաբանեցին մենշևիկների հետ կապերը խզելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ քանի դեռ վերջիններս կանգնած են «հեղափոխական պաշտպանողական» տեսակետի վրա, իրենց մնում է «բաժանվել մենշևիկներից և հիմնել իրենց կազմակերպությունը, որը պատերազմի հարցում կառաջնորդվի Ապրիլյան կոնֆերանսի որոշումներով»[26]։

Ալեքսանդրապոլի բոլշևիկները նույնպես հունիսի կեսերին, հրաժարվելով մենշևիկների հետ միասնական համաքաղաքային ժողովին մասնակցելուց, ստեղծեցին ինքնուրույն կազմակերպություն, որի օրգանը դարձավ «Նոր կյանք» թերթը։ Իսկ «Սոցիալ-դեմոկրատի» էջերից մենշևիկների հետ մեկ կազմակերպության մեջ գտնվելու վնասակարությունը Բաքվի հայ աշխատավորությանը բացատրում էին Ստ. Շահումյանը և Ա. Միկոյանը։ Ա. Միկոյանը իր «Ո՞վքեր են մենշևիկները և բոլշևիկները» հոդվածում համոզիչ փաստարկներով ցույց էր տալիս, որ մենշևիկներն ինչպես հեղափոխության, այնպես էլ պատերազմի և խաղաղության հարցերում ստանձնել են իմպերիալիստական բուրժուազիայի կամակատարների դեր։ Այսպիսով, անջատումը մենշևիկներից Անդրկովկասի բոլշևիկներին մեծապես օգնեց պատերազմի և խաղաղության հարցերում աշխատավորներին համախմբելու լենինյան լոզունգների շուրջը։

1917 թ. մայիս-հունիսին հայ բոլշևիկներն անդուլ աշխատանք էին կատարում նաև Կովկասյան բանակում, որտեղ խորանում էր հեղափոխականացման պրոցեսը։ Բանակում տարվող ամենօրյա աշխատանքում, ինչպես նաև բոլշևիկյան մամուլում տպագրված հրապարակախոսական ելույթներում ու հոդվածներում նրանք զինվորներին բացատրում էին ժամանակավոր կառավարության իմպերիալիստական էությունը, քննադատում նրան պաշտպանող համաձայնողական կուսակցությունների տակտիկան և ծրագրերը։ Այսպես, օրինակ, Ալեքսանդրապոլի կայազորում դասախոսություններով և ելույթներով հանդես եկան Բ. Ղարիբջանյանը, Գ. Հայկունին, Գ. Աթարբեկյանը, Պ. Արվելաձեն, որտեղ նրանք ներկայացնում էին բոլշևիկյան կուսակցության տակտիկան պատերազմի և խաղաղության հարցերում, ցույց տալիս դեմոկրատական հաշտության հասնելու ռեալ ուղիները։ Այդ դասախոսությունները զինվորների շրջանում առաջացնում էին մեծ հետաքրքրություն։ Բնորոշ է, որ երբ 1917 թ. հունիսի 27-ին Գ. Աթարբեկյանը 222-րդ գնդում դասախոսություն է կարդում «Խաղաղություն առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի, ազգերի ինքնորոշման հիմունքով» թեմայով, այն գրավում է զինվորների հոծ բազմություն և լսվում մեծ ուշադրությամբ։ Ինչպես նշում էր «Նոր կյանքը», «դասախոսությունը ծածկվեց համերաշխ ու բուռն

---

25 С. Е. Сеф, Революция 1917 года в Закавказье, Тбилиси, 1927, с. 171.

26 «Պայքար», 11. VI. 1917։

ծափերով։ Զինվորները ջերմ շնորհակալություն հայտնեցին դասախոսին և խնդրեցին հաճախ կարդալ այդպիսի դասախոսություններ, որոնք այդչափ դնդեցիկ կերպով ներդաշնակվում են նրանց իսկական տրամադրությունների հետ»[27]։ Ալեքսանդրապոլի կայազորի հայ զինվորների վրա հատկապես մեծ տպավորություն է գործում հունիսի 29-ին Դ. Հայկունու «Հեղափոխությունը և դեմոկրատիայի առաջադրած պահանջները» թեմայով դասախոսությունը, որտեղ նա ցույց է տալիս պատերազմի իմպերիալիստական, ավազակային բնույթը, երկրի տնտեսության քայքայումը և պրոլետարական մասսաների սոսկալի դրությունը[28]։

1917 թ. ամռանը հայ բոլշևիկները բազմակողմանիորեն քննարկում էին նաև իմպերիալիստական պատերազմի ծանր հետևանքները, ցույց տալիս նրա քայքայիչ ազդեցությունը երկրի տնտեսության վրա։ Նրանք կոնկրետ փաստերով բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին պարզաբանում էին նրանց տնտեսական վիճակի վատթարացման, մթերքների չտեսնված թանկացման իրական պատճառները։ Այսպես, օրինակ, Ս. Մանդինյանը, օգտվելով Շուշիի գավառի գյուղացիության մոբիլիզացման վերաբերյալ Բաքվի կուլտուրական միության հանձնարարությամբ կազմած հարցաթերթի տվյալներից, ցույց էր տալիս աշխատունակ ձեռքերի մոբիլիզացման քայքայիչ հետևանքները հայ գյուղի վրա։ Այնուհետև նա այն եզրակացությանն էր հանգում, որ «պատերազմը ֆրոնտի է վերածում թիկունքը, սովի ոսկրոտ ձեռքով սպառնում է լրացնել պատերազմական արհավիրքների թողած պակասը»[29]։ Թե՛ «Նոր կյանքը» և թե՛ Շուշիի «Նեցուկը» նշում էին նաև պատերազմի քայքայիչ ազդեցությունը բանվոր դասակարգի վրա։ Այսպես, «Նոր կյանքը» իր «Կորչի պատերազմը» խորագիրը կրող առաջնորդողում գրում էր, որ պատերազմը ծայր աղքատության գիրկն է նետել բանվորությանը[30], իսկ «Նեցուկը» նշում էր, որ պատերազմի հետևանքով քաղաքներն աստիճանաբար ավելի ու ավելի քիչ հաց է մտնում[31]։

1917 թ. հունիսի 18-ին ժամանակավոր կառավարությունն Արևմտյան ռազմաճակատում ռուսական բանակը հարձակման ուղարկեց։ Հունիսյան հարձակման լուրը հայ բուրժուազիան, բուրժուաազգայնական և էսէռամենշևիկյան կուսակցությունները դիմավորեցին ուռա-հայրենասիրական տրամադրություններով և ցնծալի կոչերով։ Նրանք ամեն կերպ ձգտում էին հավատացնել աշխատավորական մասսաներին, որ «հարձակումը կմոտեցնի պատերազմի ավարտը»[32], «նոր էջ կբացի ռուսական հեղափոխության պատմության մեջ»[33]։ Ինչպես հայտնի է, հունիսյան հարձակումը թանկ նստեց ռուսական բանակի վրա և ձախողվեց[34]։

Պետրոգրադում հուլիսի 3—4-ին տեղի ունեցավ հուժկու հակակառավարական ցույց, որտեղ բանվորներն ու զինվորները նորից պահանջում էին իշխանությունը հանձնել սովետներին և դադարեցնել կորստաբեր պատերազմը։ Սակայն բուրժուազիան, նախօրոք ստանալով սովետների էսէռամենշևիկյան ղեկավարության համաձայնությունը, անցավ հարձակման։ Հուլիսի 3—4-ի ցույցը խեղդվեց արյան մեջ։ Սկսվեց դաժան հալածանք բոլշևիկյան կուսակցության և Վ. Ի. Լենինի դեմ, իսկ ռազմաճակատում մահապատիժ մտցվեց։ Երկիշխանությունը վերջացավ հօգուտ բուրժուազիայի, որը ստեղ-

27 «Նոր կյանք», 29. VI. 1917։

28 Նույն տեղում, 2. VII. 1917։

29 «Նեցուկ», 31. VIII. 1917։

30 «Նոր կյանք», 2. VII. 1917։

31 «Նեցուկ», 7. IX. 1917։

32 «Բանվոր», 25. VI. 1917։

33 «Հորիզոն», 22. VI. 1917։

34 Հունիսյան հարձակման ձախողման հետևանքով ռուսական բանակը տվեց 60 հազար նոր զոհ («Всемирная история», т. VII, М., 1960, с. 617)։

ծեց իր միանձնյա դիկտատուրան։ Օգտվելով երկրում քաղաքական իրավիճակի փոփոխությունից՝ Անդրկովկասի, այդ թվում և հայ բուրժուազգայնական և մանրբուրժուական կուսակցություններն ու նրանց մամուլի օրգաններն է՛լ ավելի եռանդուն հալածանք սկսեցին բոլշևիկների դեմ՝ պետրոգրադյան իրադարձությունները համարելով հակահեղափոխություն՝ «սարքված բոլշևիկ-լենինականների և գերման գործակալների ձեռքով»[35]։

Ստեղծված իրադրության պայմաններում հայ բոլշևիկյան պարբերական մամուլը իր բողոքի ձայնը բարձրացրեց բոլշևիկների նկատմամբ կիրառվող բռնությունների դեմ՝ աշխատավորությանը պարզաբանելով, որ հունիսյան հարձակումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժամանակավոր կառավարության իմպերիալիստական պլանների բացահայտ դրսևորում և հակահեղափոխական բուրժուազիայի ձգտում՝ կանգնեցնելու աճող հեղափոխությունը, իսկ Պետրոգրադի հուլիսի 3—4-ի ցույցը՝ բանվորների և զինվորների արդարացի բողոք՝ կառավարության հակաժողովրդական քաղաքականության դեմ։ Այսպես, «Բանվորի կռիվը» «Քաղաքական մոմենտը» խորագիրը կրող իր առաջնորդողում նշում էր, որ ժամանակավոր կառավարությունը հարձակում է սկսել, «որպեսզի թնդանոթների որոտի և «հաջողությունների» աղմուկի միջոցով թուլացնի, բթացնի բանվորների և զինվորների հեղափոխական միտքն ու կանգնեցնի հեղափոխության ընթացքը»[36]։ Իսկ «Նոր կյանքը» տպագրեց հուլիսի 3-ին Ալեքսանդրապոլում բացված Կովկասյան բանակի ռադիոհեռագրիչների համագումարում հանդես եկած բոլշևիկներ Գ. Աթաբեկյանի և Գ. Հայկունու ելույթները հարձակման մասին, որոնցում նրանք, հանդես գալով մենշևիկ Ե. Ասրիբեկյանի և դաշնակցական Հ. Տերտերյանի դեմ, քննադատեցին հարձակման հոսանքը, որպես հեղափոխության թիկունքին ուղղված ծանր հարված, որը «կխլե նորից հազարավոր կյանքեր»[37]։ Հայ բոլշևիկյան պարբերականները մերկացնում էին նաև բուրժուազգայնական մամուլի հորինած այն հերյուրանքները, թե իբր բոլշևիկյան ագիտացիայի պատճառով հարձակումը ձախողվեց և ռազմաճակատը ճեղքվեց։ Այս հարցին էր նվիրված Ա. Միկոյանի «Ֆրոնտի ճեղքումը» հոդվածը, որտեղ հեղինակը, շեշտելով հարձակման ավանտյուրիստական բնույթը, նշում էր, որ հարձակման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Կերենսկու կառավարության վրա, որը, չնայած զորքի կազմալուծմանը, հակապատերազմական տրամադրությանը, տրանսպորտի և տնտեսության քայքայմանը, «...ստրկաբար ենթարկվեց «դաշնակից» և ռուս իմպերիալիստների կամքին և սկսեց հարձակումը»[38]։ Ավանտյուրիստական հարձակման ձախողման իրական պատճառների բացահայտմանն էր նվիրված նաև «Բանվորի կռվում» և «Սոցիալ-դեմոկրատում» լույս տեսած «Ո՞վ է մեղավոր» խորագիրը կրող հոդվածը, որտեղ հերքվում էին բոլշևիկների վրա բարդված անհեթեթ և սուտ մեղադրանքները[39]։

1917 թ. օգոստոս-սեպտեմբերյան օրերին, երբ կոռնիլովյան միապետական դավադրության ճնշման և սովետների բոլշևիկացման պրոցեսի ավարտից հետո ժողովրդական մասսաների հեղափոխականացումն է՛լ ավելի էր խորացել, բոլշևիկյան մամուլի շուրջը համախմբված հայ բոլշևիկները ևս, ղեկավարվելով կուսակցության VI համագումարի որոշումներով, բանվորներին, զինվորներին նախապատրաստում էին զինված ապստամբության։

Հայ բոլշևիկյան պարբերական մամուլը, պատերազմի և խաղաղության բնագավառում ելնելով Վ. Ի. Լենինի մշակած տակտիկայից և ստրատեգիա-

---

35 «Հորիզոն», 6. VII. 1917։

36 «Բանվորի կռիվը», 29. VI. 1917։

37 «Նոր կյանք», 9. VII. 1917։

38 «Սոցիալ-դեմոկրատ», 9. VII. 1917։

39 «Սոցիալ-դեմոկրատ», 30. VII. 1917, «Բանվորի կռիվը», 4. VIII. 1917։

յից, ինչպես նաև ղեկավարվելով կուսակցության VI համագումարի որոշումներով, պատերազմի ավարտն ու դեմոկրատական հաշտության կնքումը կապում էր հակահեղափոխական ժամանակավոր կառավարության տապալման և պրոլետարիատի զինված ապստամբության հաղթանակի հետ։ Այսպես, «Նեցուկն» այն միտքն էր պրոպագանդում, որ «համաշխարհային պրոլետարիատն է, որ դարձյալ պիտի բարձրացնի իր միջազգային դրոշակը և վերջ տա համաշխարհային այն սպանդանոցին, որը տիրող դասակարգերի նվաճողական քաղաքականության չար հանճարի մի գործ է»[40], իսկ թերթի մեկ այլ համարում հանդես եկած բոլշևիկ Հ. Կամարին նշում էր, որ «միլիտարիզմը կարելի է տապալել իր սեփական ժողովրդի ձեռքով»[41]։

Սեպտեմբեր-հոկտեմբերյան փուլում, երբ ուժեղացել էր իմպերիալիստական բուրժուազիայի ձգտումը՝ աճող հեղափոխական շարժման նկատմամբ հաշվեհարդար տեսնելու, նպատակով արագացնելու կողոպտչական հաշտության կնքումը, հայ բոլշևիկյան թերթերը հանդես եկավ իմպերիալիստական հաշտության խիստ քննադատությամբ, ցույց տալով, որ դեմոկրատական ու հաստատուն հաշտություն կարող է կնքել միայն սոցիալիստական հեղափոխության շնորհիվ իշխանության գլուխ կանգնած բանվորագյուղացիական կառավարությունը։ Այսպես, «Բանվորի կռիվը» նշելով, որ «բուրժուական կառավարությունները շտապում են հաշտություն կայացնելու և այդպիսով տիրող հասարակարգի հիմքերը փրկելու ժողովուրդների դժգոհության ալիքներից»[42], այն մտքին էր հանգում, որ միայն պրոլետարիատի նվաճած խաղաղությունը կարող է կանխել ժողովուրդների նոր սպանդը[43]։

Հոկտեմբերի անմիջական նախապատրաստման ժամանակաշրջանում հայ բոլշևիկյան թերթերը շարունակում էին աշխատավորներին կոչ անել դուրս գալու վերջին վճռական գոտեմարտի՝ տապալելու հակահեղափոխական բուրժուազիայի դիկտատուրան և ստեղծելու բանվորագյուղացիական կառավարություն, որը կվերջացներ պատերազմը, ժողովրդին տալով հաց, հող և խաղաղություն։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո էլ հայ բոլշևիկյան պարբերական մամուլը շարունակեց լայնորեն քննարկել պատերազմի և խաղաղության հարցերը, այս անգամ արդեն Անդրկովկասի բոլշևիկյան մյուս թերթերի հետ իր էջերը տրամադրելով հաշտության լենինյան դեկրետի և սովետական կառավարության արտաքին խաղաղասիրական քաղաքականության լուսաբանմանն ու պրոպագանդմանը։

ВОПРОСЫ ЛЕНИНСКОЙ ТАКТИКИ ВОЙНЫ И МИРА В АРМЯНСКОЙ БОЛЬШЕВИСТСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ (март—октябрь 1917 г.)

АРУТЮН АЛЕКСАНЯН

Резюме

В марте—октябре 1917 г., когда в политической жизни страны вновь остро встал вопрос войны и мира, армянская большевистская

---

40 «Նեցուկ», 18. VIII. 1917։

41 Նույն տեղում, 21. IX. 1917։

42 «Բանվորի կռիվը», 22. IX. 1917։

43 Նույն տեղում, 12. X. 1917։

пресса, руководствуясь решениями партии и указаниями В. И. Ленина, критиковала антинародную, империалистическую политику Временного правительства и поддерживающих ее в Закавказье буржуазно-националистических и эсеро-меньшевистских партий, одновременно разоблачала подлинную сущность апрельского кризиса, «Займа свободы» и июньского наступления. В эти дни армянские большевистские органы печати вели широкую разъяснительную работу среди армянских трудящихся масс и солдат Кавказской армии, разоблачали истинных виновников поражения русских войск на Западном фронте, показывая всю гибельность империалистической войны для армянского народа. Конец войны и достижение демократического мира армянская большевистская пресса связывала только с победой пролетарской революции и установлением Советской власти.